Կաքավիկ

1. Արև բացվեց թուխ ամպերեն,
   Կաքավ թռավ կանաչ սարեն,
   Կանաչ սարեն, սարի ծերեն,
   Բարև բերավ ծաղիկներեն:

Սիրունիկ, սիրունիկ,
Սիրունիկ, նախշուն կաքավիկ:

2. Քո բուն՝ հյուսած ծաղիկներով,
   Շուշան, Նարգիզ, Նունուֆարով,
   Քո տեղ՝ լցված ցող ու շաղով,
   Քնես, կելնես երգ ու տաղով:

Սիրունիկ, սիրունիկ,
Սիրունիկ, նախշուն կաքավիկ:

3. Քո թև՝ փափուկ ու խատուտիկ,
   Պստի կտուց, կարմիր տոտիկ,
   Կարմիր, կարմիր տոտիկներով,
   Կշորորաս ճուտիկներով:

Սիրունիկ, սիրունիկ,
Սիրունիկ, նախշուն կաքավիկ: